վան (նոցա), քանզի գիր նոցին ի վերայ ինքեանց կա-
տարեսցի։ Եւ ի գիշերի զդի էֆէնտուն տան ի տեարս
եւ ընկեցին զերկոսինն արտաքս ի տեսիլ ռամկին։

Եւ զքիւրէքճին արար հրաման վէզիր ի Նոր Կի-
բակէի աւուրցն Ժողովել յամենայն սեռից, որ եւ ե-
զեւն իսկ. եւ լինէր բազում աղմուկ ի մէջ Հայոց,
զի այրեալ եկեղեցիք[1]) չկամէին տալ իսկովին զամե-
նայն եւ այլքն ոչ կասէին յայնցանէ, վասն որոյ եւ
պատրիգն բազում անգամ մատնէր յերկաթս բանտին
և ի կալանս, զի չկարէր վճիռ առնել իրաւամբ, վասն
զի ի մի կողմ ոչ գադարէր խօսք նորա, այլ երբեմն
յայս կոյս եւ երբեմն յայն. այլ եւ բազումք ի Հայոց
մատնէին ի կալանս եւ տային տուգանս, զի փոյթ ընդ
փոյթ առնէին ի նոցանէ զամենայն։

Եւ հանին զտօնանման Գ աւուրքք յառաջ քան
զպայրամն իւրեանց, Կ բերթ նաւ, որ էր ամսոյն ԺԵ։
Նա՛ եւ երկերիւր յաւել եւ պակաս նաճարս կալեալ
յուղարկեցին ի Նոր բերդն զի զփլեալ չէնս ամրացեալ
շինեսցեն։ Գայր եւ գանձն Եգիպտոսի ընդ աւուրսն
հասանել օլօֆին պայրամի, գայր և լուրն սովոյ լեալ
յամենայն յաշխարհ յանցեալն ամի։

Իւսուֆ աղա ոմն անձնամահ լեալ, զոր իբրեւ
լուեալ զխէթ վէզիրի առ իւր, երթեալ վաղվաղակի
յեզերս ծովու եւ հանեալ զմուշտակն տայ ի ճորտն
եւ անկեալ զիւրովի ի ծով եւ սատակի. սա զափու
քէհեասի Շահսուարին եւ այլոց։ Յետ ոչ բազում ա-
ւուրց[2]) ետ արքայ բերել զխասէքի Մէհմէտ փաշա ի
Բերիոյ եւ խօսել ետ առաջի նորա եւ ետես զի ան-

1) եկ՚՛. 2) աւուրք.